առաւօտից մինչեւ երեկոյ, անդադար շարժման մէջ է: Նրա ամենատես աչքերը ամէն բանի վրայ կը նայէին եւ ամէն բան կը դիտէին. նրա անհանգիստ լեզուն ամէն բանի մասին հարցմունքներ կանէր եւ անվերջ հաշիւ ու համարներ կը պահանջէր: Մինչեւ մահ նա չթողեց ձեռքից իր կառավարութեան գաւազանը — ահագին փայտեայ շերեփը, որով նա ընթրիքի եւ ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում: Մինչեւ նրա մահը մեր տան թէ մեծը եւ թէ փոքրը ամենայն խոնարհութեամբ հպատակում էին նրա հեղինակութեանը:

Տատս շատ աշխատասէր կին էր: Ես դեռ յիշում եմ, թէ որպէս գիշերի մեծ մասը, նստած այծի մորթի վրայ, դնում էր իր առջեւ մանելու մեքենան, եւ ոսկրացած ձեռքով, պտոյտ տալով ճախարակի թեւքը, բամբակից թել էր պատրաստում: Ինձ թւում է, թէ դեռ զարկում է իմ ականջներին պառաւի դողդոջուն մեղեդին իր տխուր, մելամաղձական հնչիւններով. ինձ թւում է, թէ դեռ լսում եմ նրա նահապետական մեքենայի խուլ ճռճռոցը:

Մեր գիւղում տատս համարւում էր խելացի պառաւներից մէկը, իսկ իր տան մէջ նրա իմաստութիւնը հասնում էր անսխալականութեան: Ճշմարիտն ասած, ես էլ փոքր ժամանակս հիացած էի նրա իմաստութիւնով: Նա ամէն բան գիտէր: Նա գիտէր, թէ ի՞նչ նշանակութիւն ունեն այս եւ այն երազները: Նա գիտէր, թէ ի՞նչ խորհուրդ ունեն, երբ մարդու մարմնի այս ու այն մասերը «խաղում ենէ: Նա հասկանում էր կաչաղակի լեզուն, եւ բացատրում էր, թէ ի՞նչ լաւ խաբարներ է բերում նա, երբ մեր պատի վրայ նստած կչկչում է: Նա լսել չէր կարող բոի չարագուշակ ձայնը, եւ պատոհրում էր ինձ՝ քարով սպանել նրան, երբ կը նստէր մեր պատի վրայ: Նա գիտէր, թէ ինչու՞ Սողոմոն իմաստունը անիծեց ճնճղիկին, կամ ո՞վ դրեց յոպոպի գլխի վրայ այն գեղեցիկ փետուրէ սանդրը:

Այո՛, տատս շատ բան էր իմանում: Նա պատմում էր ինձ, թէ ինչպէս կը հասնի աշխարհի վերջը, կամ երբ կը յայտնոի Նեռը: Նա ասում էր, թէ անիծեալ Նեռը կը գայ, մի ահագին էշի վրայ նստած, թէ նրա աւանակի ականջները այնքան երկար կը լինեն, որ մի ականջի ծայրը կը հասնի մինչեւ արեւմուտք, իսկ միւսինը՝ մինչեւ արեւելք: Նա ասում էր, թէ այն ժամանակ կայտնոին «աջուջ-մաջուջներըէ, թէ դրանք այնքան փոքրիկ թզուկներ են, որ իմ կօշիկները կարող էին նրանց համար բնակարաններ լինել:

Բայց ես աւելի սիրում էի տատիս հեքիաթները:

Ես դեռ յիշում եմ մի քանի հեքիաթներ, որ գիշերները պատմում էր նա: Երբեմն, մի անգամ սկսած հեքիաթը վերջացնում էր մի ամբողջ շաբաթոայ ընթացքում: Ա՛խ, ինչպէս լաւ պատմում էր նա: Ես բոլորը, բոլորը հասկա-